A GOOD ADVERTISING MEDIUM

ՔԱՂԱՔԱՑԻ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

THE CITIZEN

THE ONLY ARMENIAN PAPER Published in California.

VOL. I. NO. 20 FRESNO, CAL. SATURDAY, DEC. 27, 1902. PRICE, 5 CENTS.

ՀԱՄԱՐ Ա. ԹԻՒ 20. ՖՐԷԶՆՕ, ՔԱԼ. ՇԱԲԱԹ, ԴԵԿՏ. 27, 1902 ԳԻՆ 5 ՍԷՆԹ

ԱԶԴ

Կը խնդրենք մեր բոլոր գործակալներէ որ հաճին իրենց հաշիւները ղրկել մեզ՝ մինչև Յունվար 1։

Զի վճարող բաժանորդներէն ալ կը խնդրուի իրենց հին պարտքերը վճարել անյապաղ։

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

—0—

ՍՈՍԿԱԼԻ ԱՐԿԱԾ ՄԸ

—0—

Ծնունդը սուգի օր մը եղաւ այս տարի Ֆրէզնոյի ժողովուրդին համար։

Անցեալ Շաբաթ գիշերի Աուլ սրնթացը՝ Ըսթաքթըն Ֆլայըրի հետ սոսկալի բաղխում մը ունեցաւ Պայրընի մօտ։ Քսանէ աւելի ճամբորդներ իրենց կեանքը կորսնցուցին և քառասունի չափ ալ անձինք ծանր կերպով վիրաւորուեցան։ Ասոնց մէջ թէև հայ մը չի կար այդ գիշեր՝ բայց մեռածներուն մեծ մասը Ֆրէզնոյի ծանօթներ ըլլալով մեր գաղթականութեան վրայ ալ սովորականէն աւելի տխուր տպաւորութիւն մը կը թողու։

Աուլ կառախումբը Օքլընտէ մեկնելէ քիչ վերջը կը տեսնուի որ անոր վայրաշարժը՝ մէկ կողէն չոգի դուրս կուտար. պահ մը վերջ փտտուած տեղին ազդեցութիւնը աւելի զգալի կը դառնայ՝ անանկ որ Մեքենագէտը՝ առաջի առթիւ զայն փոխել կորոշէ. Երբ սակայն կառախումբը Պայրընի կը մօտենայ, ուր ուրիշ վայրաշարժ մը առնել կը մտածուէր, փտտուած գործին անկարող կըլլայ շարունակել իր ճամբան։ Մեքենագէտը կը կեցնէ զայն՝ ի հարկէ առժամանակեայ նորոգում մը ընելու նպատակաւ։

Գիտնալով սակայն թէ Ըսթաքթըն Ֆլայըրը ետևէն կուգար՝ նոյն գծի վրայ՝ արկածի մը առջեն առնելու համար՝ մէկը կը ղրկուի որ հապճեպով երթայ և նշան տայ գալիք կառախմբին։ Այս նախազգուշութիւնը ակնկալուած արդիւնքը չունենար, և քիչ վերջ Ֆլայըրը կը հասնի, և ահաւոր ընդհարումը տեղի կունենայ։ Ըսթաքթընի կառախմբին վայրաշարժը ամբողջովին կը խրի Աուլի վերջի կառքին մէջ՝ անանկ որ այս վերջնոյ երկու պատերը վայրաշարժը կը պատեն իրենց մէջ։ Արդիւնքը դիւրին է երեւակայել։

Ամէն Ֆրէզնոյի գիտէ թէ Աուլի վերջի կառքը "Ֆրէզնոյի կառք" անունով կը ճանչցուի։ Սան Ֆրանսիսկոյէ հոս եկողներն այդ կառքին մէջ կը նստին միշտ։ Անցեալ Շաբաթ գիշեր սովորականէն աւելի մեծ բազմութիւն մը կար այդ կառքին մէջ, որոնցմէ քանի մը հոգի միայն հրաշիւք ազատած են։ Ազատեալներուն մէջ են Ջէսթր Հ. Րաուլ և Ֆրանք Շօրթ որք՝ ընդհարումէն քանի մը րոպէ առաջ՝ ընթրելու գացեր էին յաջորդ կառքին մէջ։

Լեոն Նշիկեան անցեալ չորեքշաբթի սկիզբները կը գրէր իր ծնողաց թէ՝ տօնելու առթիւ՝ մտադիր էր Ֆրէզնօ գալ Շաբաթ գիշերի կառախմբով իր դասընկերներէ մէկին հետ միասին։ Բայց ուսանող պատանին՝ թերևս երկրորդ մտածումով մը՝ Ուրբաթ գիշերի կառախմբով եկած էր առանձինն՝ գուցէ գիշեր մը աւելի անցնելու համար իր ծնողաց քով. և այդ աճապարհանքը ազատած էր պատանին սոսկալի արկածէ մը որուն զոհ գացած է իր դասընկերը՝ 23 տարեկան երիտասարդ մը։

—o— —o— —o—

—Ֆրէզնոյի՝ թերեւս բոլոր Քալիֆօրնիոյ պատմութեան մէջ նմանը չի լսուած բարբարոսական սպանութիւն մը տեղի ունեցած է անցեալ հինգշաբթի գիշեր։ Սպանեալն է Թ. Ծ. Էյքհօլց անուն Գերմանացի հրեայ մը որուն գլուխը քանի մը տեղերէ տապարով կամ ծանր գործիքով մը ջախջախուած է՝ անճանաչելի ըլլալու աստիճան։ Սպանութիւնը գործուած է Էյքհօլցի խանութին մէջ՝ որ քաղաքիս Քըրն փողոցի վրայ է՝ Տըն անուն շէնքին մէջ։

Ուրբաթ առաւօտ երկու կիներ յիշեալի խանութը կը մտնեն՝ ժապաւէն գնելու համար. երկար ատեն սպասելէ վերջ՝ խանութին դէպի վերի կողմը կը քալեն ասոնք՝ հաւանականաբար ձայն հանելու կամ խանութպանին ուշադրութիւնը գրաւելու մտօք։

Կիները կը սարսափին երբ խանութպանը՝ սեղանի մը ետև՝ գետինը փռուած կը գտնեն՝ արիւններու մէջ կորսուած։

Սպանեալը 58 տարեկան է, որուն համար կըսուի թէ 40,000 տոլարի հարստութիւն ունի և յետին աստիճանի աղքատութեամբ կապրի իր խանութին ետևը՝ պզտիկ սենեկի մը մէջ։

Ոստիկանութիւնը կը կարծէ թէ Էյքհօլցը սպաննուած է գողերու ձեռքով, վասն զի ոչ միայն ծեր հրեան թշնամի չունենի եղեր, այլ ճանչցուած է իբր մեծահարուստ մէկը որ իր դրամին մեծ մասը իր անձին վրայ կը պահէ եղեր՝ ապահովութեան համար։

Մարդասպանը գտնելու համար թէև ամեն ջանք կընէ ոստիկանութիւնը՝ բայց յաջողութեան հաւանականութիւնը շատ տկար կերեւի՝ ներկայ պարագաներու տակ՝ երբ մանաւանդ մարդասպանը որ և է հետք թողուցած չէ իր ետև։

—Գաւառիս նորընտիր ընդհանուր դատախազը Ճօրճ Վ. Ճօնս շաբթուս մէջ ծանոյց թէ իրեն օգնական կարգած է Ֆրանք Քօքի և Ս. Ս. Սէնթս Ճան։ Ֆըրանք Քօքի՝ Մանուկեանի դատը պաշտպանող փաստաբանն է, իսկ Սէնթ Ճանս՝ այժմեան արդարութեան դատաւորը որուն պաշտօնը կը լրանայ այս տարի։

—Ընթերցողք գիտեն թերևս թէ Դաշնակցական կառավարութիւնը քաղաքիս մէջ յատուկ շէնք մը որոշած էր կառուցանել՝ 100,000 տոլարի արժողութեամբ։ Այս շէնքին համար բաւական աւելնէ ի վեր յարմար տեղ մը կը փնտռուէր։ Ուաշինկթընէ եկած հեռագիր մը կըսէ թէ կառավարութիւնը այժմեան Քօվան Հաուզին տեղը ընտրած է այդ շէնքին համար։ Ուրիշ հեռագիր մըն ալ կը ծանուցանէ թէ երեսփոխան Նիտհըմ դիմում ըրած և 100,000 տոլարի յաւելում մը խնդրած է Երեսփոխանութենէն՝ նախկին որոշուած գումարին վրայ, և կըսուի թէ Քալիֆորնիոյ Երեսփոխանին խնդիրը պիտի կրնայ ընդունուիլ։

—Անցեալ Կիրակի օր Երիցական Եկեղեցւոյ մէջ քարոզեց Փրօֆ. Մալլարեան՝ ի ներկայութեան խուռն բազմութեան մը։ Քարոզէ վերջ հանգանակութիւն մը բացուեցաւ 1903ի ընթացիկ ծախուց համար, և ստորագրուեցաւ 700 տոլարի չափ։ Այս հանգանակութիւնը կը շարունակուի տակաւին եկեղեցւոյ երէցներու ձեռամբ։

—Քրիստոնէական ջանից ընկերութիւնը իր պաշտօնեաները ընտրեց նոյն օրը՝ յաջորդ վեց ամիսներու համար։ Նորընտիր պաշտօնեաներն են՝ Յակոբ Յովհաննէսեան՝ Նախագահ, Օր. Քէյթ Վարդանեան՝ փոխ Նախագահ, Թ. Խնկեան՝ գրագիր, Օր. Րօզ Ֆիլեան՝ փոխ գրագիր, Արամ Յովհաննէսեան՝ գանձապահ։

—Անցեալ Ուրբաթ երեկոյ տեղի ունեցաւ Ֆ. Հ. Գ. Միութեան ներկայ շրջանի լսարանական առաջին ժողովը Միութեան ժողովասրահին մէջ։ Գործադիր ժողովը շատ ճոխ յայտագիր մը պատրաստած էր ժողովին որ կրնար բացման հանդէս մ'ալ նկատուիլ։

Առաջին ատենախօսը եղաւ Փրօֆ. Մալլարեան որ խօսեցաւ Հայկական բարքերու յոռի կողմերուն վրայ, և մատնանիշ ըրաւ այն յոռի բնաւորութիւնները զորս ստացեր ենք Թրքական բռնութեանց տակ ապրած ըլլանլուս համար։

Տքթ. Շահպազեան Նախորդ ատենախօսին ըսածները հաստատելէ վերջ՝ մատնանիշ ըրաւ այն միջոցները որոնցմով կրնայինք ուղղել մեր յոռի բնաւորութիւնները, և վերածնիլ իբր մարդ և ազգ։ Խօսեցան նաև Յ. Ասլանեան, Տքթ. Էնշէլեան և Մ. Մինասեան։ Ատենախօսութիւններէ զատ, երգեր երգուեցան, և Օր. Աստղիկ Աճէմեան՝ Սան Ռւօքին բանաստեղծութիւնը արտասանեց՝ մանկական նշանակելի յաջողութեամբ։ Ժողովը գոցուեցաւ ժամը 10 և կէսին՝ յաջորդ ուրբաթ

ՁԵՐ ԱՏԱԽՁՆԵՐԸ ԳՆԵՑԷՔ

Ս. Ս. ՓԻՐՍ

ԱՏԱԽՁԻ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԷՆ։ ՓՐԷԶՆՕ ՔԱԼ.

ՍԸԹՐԸՆ ՓԸՍԻՖԻՔ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Եթէ Թուրքիայէն Ամերիկա եկող բարեկամ մը ունիս, կամ եթէ կը փափաքիս Թուրքիա կամ այլուր երթալ, թիքէթի համար դիմէ Սըթրըն Փըսիֆիք ընկերութեան օֆիսը։ Ամերիկայի ո և է մէկ կէտին համար տոմս կը վաճառէ միևնոյն ընկերութիւնը։ Աւելի տեղեկութեանց համար դիմել առ

Ճ. Ֆ. ՀԻՔՍԸՆ — Թ. Ֆ. ՊՐՕՍՆՀԱՆ

Տիվիժըն փասինճըր Էյճընթ։ Սիթի Թիքէթ Էյճընթ

Քաղաքի գրասենեակը—Թիւ 1013 ՃԷՅ Փողոց, Նոր Փաթըրսըն Պլաքին առջև

ՍԵՐՈԲԵԱՆ ԵՂԲԱՐՔ

Ամենաբարձր գին կը վճարեն

ԹՈՒԶԻ, ԴԵՂՁԻ ՈՒ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՉՈՐ ՊՏՈՒՂՆԵՐՈՒ։

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ 'ՔԱՂԱՔԱՑԻ' Ի

Միտըլպօրօ, Մասս. — — Պ. Միքայէլեան
Ուայթինսվիլ, ' — — Հ. Նիկողոսեան
Ուէսթ Հօպոքըն, Ն. Ճէրզի — Հ. Մագուճեան
Պրայթըն, Մասս. — — Գ. Վարդանեան
Պօսթըն, Մասս. — Սիրականեան և Դանիէլեան
Սէլըմ, ' — — Ա. Թաշճեան
Սըմիթ, Նիւ Ճէրզի — Ս. Հայրապետեան
Հէվրիլ, Մասս. — — — Մ. Կարօ
Սէնթրըլ Ֆօլս, Մասս. — Նշան Մինասեան

Ձեր Ապահովագրութեան համար դիմեցէք առ

Պ. Ֆ. Շեփըրտ եւ Ընկ.

1123 ՃԷՅ Ըսթրիթ

Պահտնջները փութով կը վճարուին։ Յաճախորդք միշտ գոհացում կստանան։

ՃԻՆԹՐՕԹ-ՊՕՐՏՐՕ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

1815, 1821 ԹՈՒԼԱՐԻ ԸՍԹՐԻԹ

Մեծաքանակ Վաճառականք Նափայի, Սընօմայի եւ. գինիներու, տեղական և ներածեալ օղիներու։

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԷՅՃԷՆԹՆԵՐ

Բիսմաթիգմի ապահով դեղ ճանչցուած ՈՒԻԹԸՆԻ ՄԷՏԻՍԻՆԼ ջուրերուն։ —Թէլէֆօն, Ուայթ 817։—

Տօն օրերու յարմար նուէրներ արդուզարդի վերաբերեալ ապրանքներ գնելու համար գնա Ֆրէզնօ Ֆառմասին։ Տքթ. Ս. Փառըք 1162 Ճէյ Փողոց, Ֆրէզնոյ։

երեկոյ կրկին անգամ գումարուելու հրաւիրանօք։

—Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ անցեալ Կիրակի օր՝ Նոր Հոգաբարձութեան ընտրութիւնը՝ գաղտնի քուէարկութեամբ։ Յառաջիկայ տարիի համար Հոգաբարձու ընտրուեցան Տեարք Յակոբ Ռատիկեան, Յակոբ Քէշիշեան, Խաչեր Մանուկեան, Հայրապետ Ստեփանեան և Գէորգ Ղազարեան։ Ժամանակի սղութեան համար ընդհանուր դիւանի ընտրութիւնը յետաձգուեցաւ յառաջիկայ կիրակիի՝ վաղուան համար։

—Ռուսական Թուրքեստանէ կը հեռագրեն թէ Անտիճան քաղաքը ահռելի երկրաշարժի մը թատերաբեմ եղած է վերջերս, ու այս առթիւ 4,000 հոգի կեանքերնին կորսնցուցեր են՝ փլատակներուն տակ մնալով։ Կառավարութեան գանձարանը, ուր հինգ միլիոն րուպլի պահուած կայ եղեր, հիմնայատակ եղած է։ Տեղական իշխանութիւնք փլատակներու մէջէն կաշխատին թաղուած գանձը դուրս բերել։

—Կուաթէմալայի Նախագահը նոյն հանրապետութեան ամերիկեան հիւպատոսին հրաման ըրած է երկրէն անմիջապէս մեկնիլ. վասն զի Ընքըլ Սամին ներկայացուցիչը կը պատսպարէ ու կը պաշտպանէ եղեր այն կարգ մը տեղացիներն ու ամերիկացիները որոնք ապստամբութիւն մը դաւել կաշխատին եղեր տեղական կառավարութեան դէմ։

—Անցեալ հինգշաբթի երեկոյ տեղի ունեցաւ Երիցական Եկեղեցւոյ մէջ՝ Ծննդի փառաւոր հանդէս մը որ կը տրուէր Կիրակնօրեայ Վարժարանի աշակերտներուն կողմէ։ Հանդէսը բացուեցաւ աղօթքով մը զոր ըրաւ օրուան Նախագահը Պ. Մանուկեան։ Յետոյ՝ երգեր երգուեցան ու արտասանութիւններ եղան փոքրիկներու կողմէ։ Մեներգ մը երգեց Պ. Կակոսեան, ուրիշ երգ մ'ալ Օր. Պապոյեան որուն ծաղկեփունջ մը տրուեցաւ։ Արտասանութիւններ ըրին նաև Օրիորդք Մարիամ Յովհաննէսեան և Սուզի Մարգարեան։ Հանդիսին թերևս ամենէ հետաքրքրական մասն էր Նուէրներու, պտուղներու և շաքարեղէններու բաժանումը զոր խմաստութեամբ կատարեց ալևոր "Սանթա Քլօզը" որ հայացած էր այդ երեկոյ։ Նուէրներու առատութիւնը ու Ծննդեան ծառին փառաւորութիւնը հանդիսական բազմութեան ուշադրութենէն չի վրիպեցաւ այդ երեկոյ։

—Տքթ. Լօնկ՝ Ալքաթրազ կղզիի զինուորական հայ բժիշկը Ֆօրթ Նուշան Ջօրանոցը փոխադրուած է մի և նոյն պաշտօնով։ Ֆօրթ Նուշան՝ Իւթահի մէջ պզտիկ տեղ մըն է՝ Սօլթ Լէյք Սիթիէն 60 մղոնի չափ հեռաւորութեամբ։

—Ֆիլիպեան կղզիներէն եկող Թովմաս անուն շոգենաւը լուր կը բերէ թէ Մանիլայի մէջ Քօլերա երևան ելած է բաւական առենէ ի վեր, և ուր օրական 30է աւելի դէպքեր կը պատահին։ Կղզիի հարաւային կողմերը շատ աւելի սաստկացած է եղեր այդ տարափոխիկը, ուր բռնուողներուն թիւը երթալով կաւելնայ եղեր ամէն օր։ Կառավարութիւնը կըսուի թէ ինքզինքը անկարող կըզգայ համաճարակին առջևն առնելու համար։

—Մինչ Սիվըրթաւն շոգենաւը խաղաղականի Նոր հեռագրաթելը ձգելով կընթանայ դէպի արևելք՝ անդին լուր կուգայ թէ Մարքոնի անթել հեռագիրը սկսած է գործել մեծ յաջողութեամբ՝ Քանատայի և Անգլիոյ միջև։ Շաբթուս մէջ հեռագիրներ փոխանակուած են Մարքոնիի և Քանատայի կառավարչին, Անգլիոյ և Իտալիոյ թագաւորներուն միջև։

—Ալլի արկածեալներէ մեռնողներուն թիւը 27ի բարձրացած է։ Անցեալ երեքշաբթի օր տեղի ունեցաւ Ֆրէզնոյի մեռեալներու յուղարկաւորութիւնն ու թաղումը՝ ի ներկայութեան անհամար յուղարկաւորաց։

Ճ. Մ. Սերոբեան, Ճ. Պաններ, Յ. Մ. Սերոբեան

Սան Ճոքին Վալի Լոնտ Քօ,

Ճ. ՊԱՆՆԸՐ, Վարիչ.

ՀԱՍՏԱՏՈՒՆ ԿԱԼՈՒԱԾ ԵՒ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Թիւ 954 Այ Փողոց, Ֆրէզնօ, Քալիֆօրնիա։

Թէլէֆօն, Մէյն 40

Եթէ կը փափաքիս գնել կամ ծախել մշակուած կամ անմշակ ամեն տեսակ կալուած՝ եկուր և մեզ տես թէ ինչ տեսակ առաջարկութիւններ կրնանք ներկայացնել քեզ։ Ներկայացուցիչներն ենք շատ մը առաջնակարգ ապահովագրական ընկերութեանց, որոց համար ձեր գործերը կը խնդրենք։

Է. Օ. ՏՐԱՅԸՐ

2241 Ֆրէզնօ փողոց, — — Ֆրէզնօ Քալ.

ԹԷԼԷՖՕՆ, ՊԼՈՒ 76

Ամէն տեսակ փլըմպինկ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ— Սամըն Ռուինտմիլի և Թէնքի։

ԳԱՐԵԳԻՆ ՍԱՐԳԻՍԵԱՆ

1255 Այ Փողոց, — — — Ֆրէզնօ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՐՃԱՐԱՆ

— Գոհացում կը տրուի բոլոր յաճախորդաց —

Տքթ. Յ. Ղազարեան,

ԱՏԱՄՆԱԳՈՐԾ ԵՒ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ջանս Պլոք, Այ Ըսթրիթ, Ֆրէզնօ, Քալ.

Գոհացուցիչ և առաջնակարգ գործ։ Կատարեալ գոհացում Յաճախորդներուն։ Գիները միշտ չափաւոր։

Թէլէֆօն — — — — — Ռեայթ 231

ՔԱՂԱՔԱՑԻ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՃԷՑ Փողոց, Էքսփոզիթըրի Շէնքին մէջ։

Հ. ԷԿԻՆԵԱՆ, ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Միացեալ Նահանգներու և Քանադայի համար

Տարեկան մէկ ու կէս Տոլ. — Վեցամսեայ 75 Սենթ

Ուրիշ երկիրներու համար

Տարեկան 10 Ֆրանգ — — Վեցամսեայ 5 Ֆրանգ

Կը հրատարակուի ամեն Շաբաթ օրեր ի Թիւ 1033

Բաժանորդագինը կանխիկ վճարելի է միշտ

Նամակ, ծրար կամ դրամ կը ղրկուին Խմբագրութեան հետևեալ հասցէին՝

To The Editor of
THE CITIZEN
P. O. Box 1224 Fresno, Cal.

THE CITIZEN

The Only Armenian Paper Published Weekly in the State of California.

H. EGUINIAN, Editor and Manager

OFFICE, 1033 J STREET FRESNO, CAL.

SUBSCRIPTION RATES (Payable in Advance)

One Year.....$1 50 | Six Months.....75 Cents

ՖՐԷԶՆՕ, ՔԱԼԻՖՕՐՆԻԱ· ԴԵԿՏ· 27·-1902

ՆՈՐ ՔԱՂԱՔԱՑԻՆ

—o—

Տարեգլուխը և 'Քաղաքացիին' վրայ փոփոխութիւններ ընելու ժամանակը հասած ըլլալով՝ կը փութանք այս առթիւ քանի մը խօսք ըսել։

Շաբաթաթերթիս գտած քաջալերին համար մեր խորին շնորհակալութիւնը յայտնելէ վերջ ընթերցող հասարակութեան՝ կուգանք խոստովանիլ անկեղծութեամբ թէ այս փոքրիկ լրագիրը տեղական Հայոց բոլոր պահանջները գոհացնելու վիճակի մը մէջ չէ տակաւին։ Քանի մը ամիսներ առաջ՝ այս պահանջներուն ըստ կարի գոհացում մը կրնալ տալու համար՝ թերթս ընդարձակելու պէտքը զգացած էինք արդէն. և եղաւ ժամանակ մը երբ ձեռնարկեցինք չորս երեսներ աւելցնել շաբաթաթերթիս վրայ՝ հակառակ տեղական ու տպագրական շատ մը դժուարութեանց։ Սակայն մեր գրաշարին մեկնիլը արգելք եղաւ այդ ձեռնարկին։ Այդպիսի արգելքէ մը թէև կը նեղուինք տակաւին՝ բայց թերթին վրայ պզտիկ յաւելում մը ընելու չափ դիւրութիւններ ունինք մեր տրամադրութեան տակ, և կուզենք օգտուիլ անկէ։

Այդ՝ փոխանակ թերթին վրայ նոր երեսներ աւելցնելու՝ թէ՛ խնայողութեան և թէ տպագրական դիւրութեան համար՝ որոշած ենք թերթին ծաւալը մեծցուցնել՝ առանց դնին վրայ փոփոխութիւն մը ընելու։

Պարունակութեանց մասին սա չափը միայն ըսելու է թէ պիտի ջանանք ճոխացնել լուրերու բաժինը. թղթակցութիւններ, առողջապահական, երկրագործական ու գրական յօդուածներ ունենալ աւելի յաճախ. քաղաքական լուրերը տալ՝ կարելի եղածին չափ ամփոփ ու համառօտ կերպով։

Ուրիշ կարևոր յաւելում մը ևս ունինք ընելիք որ տարակոյս չունինք թէ լաւ ընդունելութիւն պիտի գտնէ՝ մանաւանդ իգական սեռին կողմէ։ Այս յաւելումն է "Կանանց Սիւնը" որ պիտի խմբագրուի հայ Տիկնոջ մը կողմէ, և պիտի ըլլայ այնչափ անկաս՝ որչափ անկաս պիտի ըլլար եթէ հրատարակուէր իր առանձին մի թերթ։ Անոր պարունակութեանց ու նպատակի մասին աւելորդ կը սեպենք խօսիլ մեր կողմէն, այլ կը թողուինք որ խմբագրուհին ինքը զրէ մանրամասնաբար՝ իր առաջին յօդուածով։

ՆՈՐԷՆ ՎԷՆԷԶՈՒԷԼԱ

—o—

Կերևի թէ Վէնէզուէլայի ծանօթ խնդիրը պիտի կրնայ վերջապէս խաղաղութեամբ լուծուիլ՝ շնորհիւ Միացեալ Նահանգաց ուղղակի և անուղղակի միջամտութեանց ու իուլ սպառնալիքին։ Նախարարապետ Հէյի ղրկած պահանջագիրը և խնդիրը հաշտարարութեամբ լուծելու առաջարկը իրենց ակնկալուած ազդեցութիւնն ու արդիւնքը ունեցան։ Եւրոպական պահանջատէր կառավարութիւնք յանձն առած են հաշտարար միջնորդի մը քննութեան յանձնել ամեն խընդիր՝ պայմանաւ որ անոր վճիռը վերջնական ու պարտաւորիչ ըլլայ։ Սակայն հաշտարար դատաւորի ընտրութեան խնդիրը խորհրդածութեանց ու բանակցութիւններու ենթարկուած կը մնայ տակաւին։ Ուաշինկթնի կառավարութիւնը կուզէ որ Լա Հէյի համազգային Ատեանը կատարէ այդ պաշտօնը, իսկ Եւրոպական կառավարութիւնք նախադաս կը համարին որ Նախագահ Ռուզուվէլթի յանձնուի այդ գործ։ Կըսուի սակայն թէ Նախագահը շատ համամիտ չէ այդ ծանր պատասխանատուութիւնը առնել իր ուսերուն վրայ, վասնզի ինչ ալ ըլլայ իր վճիռը՝ մէկ կողմին համար հակակրելի պիտի երևի և թերևս թշնամական. բացի ասկէ՝ երկու կառավարութեանց պատասխանը ծանր պայման մ'ալ կը պարունակէ որ ուրիշ ամէն բանէ աւելի արժանի է խորին նկատողութեան։ Այդ պայմանը՝ պարզ լեզու գործածելով՝ սա է թէ Նախագահը սկզբունքով պարտի ընդունիլ կանխաւ թէ Վէնէզուէլա պարտական է վնասուած օտարահպատակներուն վնասը վճարել. և երկրորդ՝ Միացեալ Նահանգաց կառավարութիւնը տեսակ մը երաշխաւոր ըլլայ Վէնէզուէլայի համար։

Եթէ սակայն Նախագահը մերժէ ընդունիլ այս պայմանները՝ Եւրոպական տէրութիւնք յանձն կառնեն խնդիրը Լա Հէյի բարձրագոյն Ատենին յանձնել որ իրաւամբ այսպիսի խնդիրներ լուծելու համար կազմուեցաւ տարիներ առաջ՝ համազգային խաղաղական ժողովին կողմէն։ Եւ այս պարագայի տակ՝ սա անմեղ սպառնալիքն ալ կըլլայ թէ նոյն Ատենին վճիռը գործադրել տալու համար՝ եթէ հարկ լինի՝ տէրութիւնք զինու զօրութեան պիտի գիմեն՝ առանց

նկատողութեան առնելու Մընրոյի վարդապետութիւնը կամ ուրիշ ո և է վարդապետութիւն։ Իրաց այս վիճակին մէջ Նախագահ Րուզուէլթ տեսակ մը անել դրութեան մատնուած է անշուշտ։ Զընդունիլ առաջարկուած պաշտօնը՝ պիտի նշանակէ Մընրոյի վարդապետութիւնը հաշտարար Ատենի մը վճռին ենթարկել. և եթէ անոր վճիռը այդ վարդապետութեան հոգւոյն հակառակ ըլլայ՝ Միացեալ Նահանգները խիստ ծանր ստանձնելիքի մը դէմ ճակատելու դրից մէջ պիտի մտնեն։ Առաջարկուած պաշտօնը ընդունիլն ալ սակայն իր ուրիշ անպատեհութիւններն ալ ունի։ Հաշտարար դատաւորի մը պաշտօնը ստանձնելով Լա Հէյի համազգային Ատենին գոյութիւնն ու կարևորութիւնը տեսակ մը վտանգի կամ չէզոքացման մատնած կըլլայ Նախագահ Րուզուէլթ։ Եթէ այսպիսի կնճիռներն ալ լուծելու համար տէրութիւնք ազատ պիտի ըլլային այս կամ այն անձին դիմելու՝ ի՞նչ հարկ կար ուրեմն անուանական մարմին մը կազմել ու պահել զայն՝ ի ցոյց մարդկան։

Բայց ի հարկէ Նախագահը երկու չարեաց փոքրագոյնը պիտի ընտրէ. այն է տեղի տալ Եւրոպացւոց առաջարկին և յանձն առնել հաշտարարի պաշտօնը՝ որով ազատած կըլլայ այս երկիրը՝ Եւրոպացւոց հետ մեծ բաղխում մը ունենալու վտանգէն. եւ կամ թէ խնդիրը Լա Հէյ ղրկել՝ պայմանաւ որ Ատեանը յանձն առնէ Մընրոյի վարդապետութեան չի դպիլ բնաւ։

Գիտնալու է նաև թէ Վէնէզուէլայի Նաւահանգիստները պաշարեալ վիճակի մէջ են հիմայ. երկրին վաճառականութիւնը ինչպէս նաև Միացեալ Նահանգաց շահերը վնասուած են այդ պաշարման պատճառաւ։ Շատ վախ կայ նաև որ ներկայ վիճակը նորանոր դժուարութեանց տեղի տայ յանակնկալս, և համազգային նոր կնճիռներ ծագին։ Նախագահ Րուզուէլթ ի հարկէ պիտի փութայ կարելի եղածին չափ շուտով հասկցողութեան մը գալ՝ պաշարումը բառնալու և անոր հաւանական հետևութեանց առջևն ալ առնելու համար։

Այդին՝ Վէնէզուէլայի այս նեղ օրերուն մէջ՝ տեղւոյն յեղափոխականները կը ջանան առիթէն օգուտ քաղել։ Անոնք կըսուի թէ կազմ ու պատրաստ վիճակի մէջ են՝ Քարաքասի վրայ քալելու։ Քասթրոյի կառավարութիւնը ի հարկէ շատ խախուտ ու վտանգաւոր վիճակի մէջ է այժմ։ Կարծողներ կան թէ Նաւահանգիստները պաշարող տէրութիւնք ձեռքի տակէ կօգնեն այս յեղափոխականաց՝ Քասթրոյի կառավարութիւնը տապալելու համար։ Կը թուի թէ մօտ է ժամանակը երբ զօրավար Մաթօս՝ յեղափոխականաց պարագլուխը՝ Վէնէզուէլայի կառավարութեան սանձը ձեռք պիտի ձգէ վերջապէս՝ եթէ այս խառնակութիւններէ վերջ՝ երկրին սանձն ալ գանձ ալ կողոպտուած չի գանուին անկուշտ Եւրոպացիներու կողմէ։

—Վերջի պահուս կը լսենք թէ Պատ. Աւետիս Կոստանդեան իր մահկանացուն կնքած է ի Փասատինա։ Հանգուցեալը Նիւ Եորքէն Փասատինա եկած էր ընտանեօք՝ երեք ամիս առաջ։

ԿԱՐԴԱՑԷՔ

—0—

Ֆրէզնոյի մէջ կարելի չէ գտնել նպարավաճառ մը որ կարողանայ մրցիլ մեր գներուն հետ։ Ահաւասիկ քանի մը ապացոյցներ որք չեն կրնար հերքուիլ։

Բրինձ—փաունտը՝ 5 ու կէս, 6, 7, 8, 9, 10 և 12 ու կէս սէնթի՝ իրենց տեսակին համեմատ։

Կանաչ սուրճ—17 ու կէս, 22 ու կէս, 25 և 30 սէնթ

Բոհրած սուրճ—12 ու կէս, 20, 25 և 35 սէնթ։

Թէյ—25, 40, 50, 75, 1.00 և 1.50 սէնթ։

Կարմիր լոպիա—3 ու կէս և 4 սէնթ։ Ճերմակը—4 և հինգ սէնթ։ Սիսեռ—5 և 6 սէնթ։ Ոսպ—7 և 8 սէնթ։ Զորցած պէղկլիւր՝ առաջին կարգի — 3 փաունտը 25 սէնթ։

22 փաունտ շաքարը մէկ տոլարի կը տրուի անոնց որոնք հինգ տոլարի ապրանք միասին կը գնեն՝ վերի գներով կամ անցեալ շաբթուան առաջին ցանկին համեմատ։ Մէկ պարկ՝ Ֆրէզնոյի ընտիր ալիւր **1** տոլարի կը ծախենք անոնց որոնք երեք տոլարի ապրանք մէկէն կը գնեն՝ վերոյիշեալ գներով կամ անցեալ շաբթուան մեր երկրորդ ցանկին համեմատ։

Այս տարօրինակ աժան գներուն վրայ դեռ ուրիշ զեղջ մ'ալ ընել յանձն պիտի առնենք մեծաքանակ գնողներուն համար։

Եթէ հրեայ նպարավաճառի մը այսօրինակ մէկ ծանուցումը երևի թերթի մը մէջ՝ Հայք հետևեալ օրը կարգի կըսպասեն այդ առիթէն օգտուելու համար։ Մենք՝ իբր հայ՝ իրաւունք չունի՞նք աւելին ակնկալել՝ երբ մանաւանդ մեր գները մրցումի չեն գար բնաւ։

Ակնկալենք և սպասենք՝ թէ մեր շահուն և թէ գնողներու օգտին համար։

Մ. Մ. ՆՇԻԿԵԱՆ, Նպարավաճառ
Հիւզ Հօթէլի շէնքին մէջ, Ֆրէզնօ։

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՃԱՇԱՐԱՆ

1249 Ալ փողոց, Ֆրէզնօ, Քալ.

Թորոս Զրուքեան — — — Ճաշարանատէր

Ցարգանօք կը ծանուցանէ իր յաճախորդներուն և հայ հասարակութեան թէ իր նախկին՝ Ճէյ փողոցի ճաշարանէն փոխադրուած է յիշեալ խանութը, ուր նորանոր կարգադրութիւններ ու յաւելումներ ըրած է։ Կերակուրներու գնին վրայ թէև յաւելում մը չէ եղած, բայց մաքրութիւն, առատութիւն և ընտիր կերակուր տալ կարենալու համար ամեն նախապատրաստութիւն եղած է, անանկ որ ոչ ոք պիտի ամչնայ զայն Հայկական ճաշարան մը անուանելու։ Փորձեցէք մի անգամ։

Լարօնս եւ Տիք

1153-1155 Ալ Փողոց, Էվընճըրի կից։

Կուզենք որ ձեր գնելիք պատի թղթերը, ներկ ու պատկերի շրջանակները մեզմէ ծախու առնէք։ Գնելու հետ ընտրութեան իրաւունք։ Պատի թուղթեր կը փակցունենք, ու կը ներկենք։

ՍԱՆԹԱ ՖԻ

** ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐՈՒ ԼԱՒԱԳՈՅՆ ԳԻԾԸ **

Ճամբորդին համար ամեն հանգիստ և դիւրութիւն

—o—

Սանթա Ֆի երկաթուղեաց ճամբան լաւագոյնը, կարճ ու ամենէ արագն է՝ արևելք երթալու կամ արևելքէ հոս գալու համար։

Ուղղակի շոգենաւային և երկաթուղիի տոմսեր Հին Աշխարհի ամեն կողմերուն և ամեն կողմերէն գալու համար։ Տոմսի գրամները կրնան հոս վճարուիլ. եթէ տոմսերը չի գործածուին՝ գրամը ետ կը տրուի։ Սան Ֆրանսիսկո երթալու լաւագոյն ճամբան է այս։ Տեղեկութիւններ սիրով կը տրուին թէ՛ կայարանը և թէ քաղաքիս գրասենեակը՝ ի թիւ 1031 ՃԷյ փողոց, Ֆրէզնօ։ Թ. Ա. ՃՕՆՍ, Գործկ.

ՍԱՆԹԱ ՖԻ
Երկաթուղեաց Ընկերութիւն

ՖՐԷԶՆՕ
ԸՆՏԸՐԹԷՅՔԻՆԿ ՓԱՐԼԸՐՍ
ՇԱՆՆԸՆ և ՊԻԼ, Տէրեր

1154 ՃԷյ փողոց, — Ֆրէզնօ. — Թէլէֆօն Մէյն 160

ԵՍԹԵՐ

Գրեց՝ ՎԱՐԴԵՆԻ

Ազգային իրական կեանքէ առնուած 237 երեսներէ բաղկացեալ վիպասանութիւն մը՝ հայ աղջիկէ մը գրուած։ Տպագրութիւնը մաքուր է և հատորը լաթակազմ։ Ծննդի և Նոր Տարիի համար յարմար նուէր։

Գինն է մէկ տոլար. կը ծախուի Ե. Յ. Մելգոնի քով, թիւ 403 Էլ փողոց, Ֆրէզնօ։

Ս. Ա. Շարբրք եւ Ընկ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

1003 ՃԷյ փողոց, Ֆրէզնօ. Թէլէֆօն, Ուայթ 566

Վարձու կուտան ու կը վաճառեն այգիներ ու ամեն — տեսակ պտուղներու ծառաստաններ։ —

Ամեն տեսակ բերքեր կը գնեն ու կը վաճառեն Այգի, ծառաստան, պարապ կամ անմշակ հող գնել կամ ծախել ուզողները ընդհանրապէս մեզ կը դիմեն։ Դուն ալ փորձ մը ըրէ և տես թէ գոհ չե՞ս ըլլար։ Անհամար հայ յաճախորդներ ունինք մենք։ Եթէ այգի սնկելու միտք ունիս՝ անպատճառ մեզ տեսնելու եկ։ Կտոր մը շատ ընտիր և ժամն հող ունինք ծախու որ այգիի համար մեծ յարմարութիւն ունի։

ՈՂԲԵՐԳ ՀԱՅԱՍՏԱՆԻ

—o—

(Ցարմարցուած)

Մրրիկներ անտառին տերևները տարին.
Հիմայ լոկ մի թռչնակ կերգէ հոն միս մինակ։
Հայրենիք գեղեցիկ, արեամբ ես ներկուած դուն,
Քաջարի քու որդիք ինկան սրբովը թշնամւոյն։
Դաշտերդ են քանդ աւեր՝ քաղաքներդ ալ անչէն.
Քամին քու հէք դստրեր օ՜հ վարեց դէս ու դէն։
Զեն շղթար մանդաղներդ մէջ դաշտին—բանակին,
Ու առատ ալ հասկերդ կոխոտէ այր ու ձին։
Քաջ որդիքդ, Հայաստան, ի մի դրօշ կը կառչին,
Անվեհեր միանան դիմելու իմաՀ՝ իմաՀ ի միասին
Զաւակներդ տեսար դուն թաթաւած մէջ արեան,
Երբ տիրէր ձմրան ձիւն կամ երբ տօթն ամարան։
Կռուեցան համօրէն մինչ իրենց շունչն յետին,
Եւ ոչ մին քաջերէն ետ դարձան վերատին։
Շերմին մէջ են արդեօք կամ բանտի կապանաց
Թէ՛ անինչ ու անոք թափառին մշտայած.
Աշխարհէն մատնուած ու լքուած Աստուծմէն,
Անողորմ 'Թշնամեաց ոտնակոխ՝ կը հեծեն։
Իմ խեղճո՜ւկ Հայաստա՛ն, իմ խեղճ Հայաստան.
Հայաստա՛ն, Հայաստան, թէ քաջերդ ետ գային՝
Ոտից տակն առնական ծընէիր պիտ՝ կրկին,
Դու ձեռաց տակ իրենց պիտ՝ ազատ ըլլայիր,
Ամէն վիշտ գտնէր վերջ, ով չքնաղ մեր երկիր։
Անոնք որ մեկնեցան՝ այլեւս չեն դառնար.
Եղերերգը միայն փառքն անոնց երգէ յար։
Պատմութիւնք ապագայ միշտ յիշեն թող զանոնք
Թող ողբան ձեր վրայ Հայկազեան Դիւցազունք։

(Թարգ. Շոփէնի երգէն) Մ. Ա. ՄԵԼԳՈՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՇՔԵՂ ԵՐԵԿՈՅԹ
ԵՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՄԲ Պ. Դ. ԹԱՊԱԴԵԱՆԻ

Երեքշաբթի երեկոյ, Դեկտեմբեր 30, 1902, ժամ 8 և կէս Ֆ. Հ. Դ. Միութեան ժողովասրահին մէջ։

Պիտի ներկայացուի Կոռնակի առաջին արարուածը, Մոլիէռի 'Գաւաթ մը թէյ՝ գաւեշտը։ Երգեր, նուագ և արտասանութիւն։ Տոմսերու գինն է 75, 50 և 25 սենթ։ Գնելու համար դիմելու է դերակատարներուն և կամ Պ. Արամ Մելքոնեանի։

GEORGE BROS.

ՀԱԳՈՒՍՏՆԵՐՈՒ, ԳԼԽԱՐԿԻ ԵՒ ԱՄԷՆ ՏԵՍԱԿ
ՃԵՐՄԱԿԵՂԷՆԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ ԵՒ
ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԴԵՐՁԱԿՆԵՐ.
1109 Ճէյ փողոց, —Ֆիշք Պլաք— Ֆրէզնօ.
Թէլէֆօն — — — Ռւայթ 711

Հասարակութիւնը վաղուց ի վեր փորձով գիտէ արդէն թէ այս խանութին մէջ ծախուած ամէն ապրանք իրենց տեսակներուն մէջ լաւագոյններն են, բայց շատ քիչեր գիտեն թէ իրենց գիները՝ բաղդատաբար ուրիշներէ բնաւ տարբերութիւն չունին։

Կը փափաքինք որ անգամ մը փորձէք և վստահացնէք դուք զձեզ այս կարևոր կէտին համար. անկէ յետոյ ուրիշ տեղ չէք երթար գնել ինչ որ կարելի է ստանալ ՃՕՐՃ ԵՂԲԱՅՐՆԵՐԻՆ։

ՍԻՐԱՀԱՐԱԿԱՆ

Երիտասարդ տղան աղջիկ մը կը սիրէ —Այդ իրեն գիտնալիք գործն է։ Դեռատի աղջիկը երիտասարդ մը կը սիրէ —Այդ ալ անոր գիտնալիք բանն է։ Ասոնք օր մը կամուսնանան ու պէտքը կըզգան

ՓԱՅՏԻ ԵՒ ԱԾՈՒԽԻ

ԱՅԴ ԱԼ ՄԵՐ ԳՈՐԾՆ Է

Ցօրսիյ Բասլինարն Ընկ.

ՄԱՔՍՈՒԷԼ ԵՒ ՄԸՏՃ,

ԼՂՒՍԱՆԿԱՐՈՉՔ

Ֆրէզնօ և Ճէյ փողցներուն անկիւնը, Ֆրէզնօ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՔԱԼԻՖՕՐՆԻՈՅ ՄԷՋ ԱՄԵՆԱԼԱՒ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՆ և ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ԿԸ ՊԱՏՐԱՍՏԵՆ

Ճ. Ք. ԵՕՔՐՄ

Սավթ Քօրթ փողոց, Վայսէլիա, Քալիֆօրնիա։

Կը ծանուցանէ թէ 700 էյքրի չափ առաջնակարգ հող ունի Տայնուպայի մօտերը որ այգիի համար շատ յարմարութիւն ունի։ Հողին տեսակներն են սև, ծանըր, աւազային և կարմիր։ Ջուրի իրաւունք հողին հետ։ Քանի մը Հայեր գնած ու շատ գոհ մնացած են այս հողերէն։ Գիները են՝ 20է մինչև 35 տոլար էյքրը։ Պայմանները՝ կարծուածէն աւելի դիւրին։ Աւելի մանրամասնութեանց համար դիմել Քաղաքացիի գրասենեակը։

Վ. ՓԱՐՔԸՐ ԼԱՅԸՆ,

ԿԱՀԿԱՐԱՍԻՔ, ԿԱՊԵՐՏ,
ՊԱՏԻ ԹՈՒՂԹ ԵՒ ՊԱՏԿԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ
1135——1138——1140——1142—Ա. փողոց։

ՄԱՀԱԳՈՅԺ

—0—

ՏԻԿԻՆ ԿԱՏԱՐ ԹՈՓՐԱՀԱՆԵԱՆ

—o—

Անցեալ Կիրակի գիշեր իսկ մահկանացուն կընքեց քաղաքիս մէջ՝ Տիկին Կատար Թոփրահանեան՝ յետ երկարատև հիւանդութեան։ Մահը թէև տարաժամ՝ բայց անակնկալ չէր, վասնզի շաբաթներէ ի վեր բժիշկները իրենց յոյսը կտրած և հանգուցեալը թողուցեր էին իր բաղդին։

Տիկին Թոփրահանեան ամուսինն էր Կարապետ Թոփրահանեանի որուն մահը գուժուեցաւ այս սիւնակներուն մէջ անցեալ Սեպտեմբեր 27ին։

Հանգուցելոյն յուղարկաւորութեան հանդէսը կատարուեցաւ Երկուշաբթի օրը, Երիցական Եկեղեցւոյ մէջ, թաղումը տեղի ունեցաւ Հայոց գերեզմանատունը՝ Կարապետ Թոփրահանեանի գերեզմանին քով։

Կրօնական պաշտօնը կատարեց և դամբանականը խօսեցաւ Փրօֆ. Մելգոն։

Տիկին Թոփրահանեան մին էր այն առաքինի, քաղցրաբարոյ և տնաշէն կիներէն որոց կեանքը՝ իբր մայր և իբր ամուսին կարժէ աչքի առջև ունենալ իբր բարի օրինակ։

ԾԱՂԿԱՔԱՂ

—o—

—Աշխարհիս վրայ 2720 կենդանի լեզուներ կան։

—Հետաքրքրական է թերևս գիտնալ թէ ամէն վայրկեանի մէջ երկու մարդ կը մեռնի աշխարհիս վրայ։

—Աշխարհիս ամենամեծ զանգակը կը գտնուի Մոսկուայի մէջ որ կը կշռէ 432,000 փաունտ։

—Միացեալ Նահանգաց թղթադրամներուն ամենէ բարձրագոյնը 10,000 տոլարնոց է։

—Թուղթը հնարուած է Չինաստանի մէջ Քրիստոսէ 170 տարի առաջ։ Տպագրութիւնը ծանօթ էր անոնց 6րդ դարու մէջ։

—Աշխարհիս առաջին դրամատունը Անգլիոյ պանքան է որ հաստատուած է 1695ին։ Նոյն դրութեան վրայ հաստատուած աշխարհի այժմեան բոլոր դրամատուններն 15 ու կէս երկիլիոն տոլարի դրամագլուխ ունին։

—Հասարակ գնտասեղը հնարուած է 1543ին. հիմայ Անգլիոյ, Ֆրանսայի և Գերմանիոյ մէջ միայն՝ շաբաթը 250 միլիոն հատ կը շինեն անկէ։

—Քինինը (Սօլֆաթ օֆ Քուայնան)՝ դեղերու թագաւորը՝ գտնուած է 1820ին։ հիմայ՝ տարին 260 հազար փաունտ կարտադրուի անկէ՝ Փէրուվիէն Պարք անուն ծառէն։

—Գեղարուեստի տեսակէտէ նայելով՝ կնկան դէմքը աւելի գեղեցիկ է երբ ձախ կողմէն նայիս անոր։

—Աշխարհիս ամենէ աւելի արձագանգ տուող շէնքը՝ Միլանի մօտ Սիմոնիթա անուն բերդն է որ ատրճանակի մը պայթման 60 անգամ արձագանգ կուտայ։

—Արդի ամենէ երկարահասակ մարդը կը բնակի

Անգղիոյ Լանկաշայր քաղաքին մէջ՝ Ճան Հօլ անուանով։ Անոր երկայնութիւնն է ինը ոտք և 6 մատնաչափ։ Ձեռքերը տասն և եօթը մատնաչափ երկայն են՝ և ութ ու կէս մատնաչափ լայն։

—Գեղձը ժամանակին թունաւոր նուչ մը եղած է. անոր պտուղի մասը կը գործածուի եղեր նետերու ծայրերը թունաւորելու համար։ Մշակութիւնը անոր թունաւոր մասը անհետացուցած և համեղ պտուղի մը վերածած է զայն։

—Աշխարհիս ամենէն պզտիկ հանրապետութիւնը և միևնոյն ժամանակ ամենէ հինը՝ Սան Մարինայի հանրապետութիւնն է որ կը գտնուի կեդրոնական Իտալիոյ արևելեան կողմերը։ Երկրին տարածութիւնն է 22 քառակուսի մղոն՝ 10,000 բնակչով։ Այս հանրապետութիւնը լաւ դաս մը չի՞ կրնար ըլլալ մեր ազգին համար։

—Մարդուս մարմնին մէջ 240 կտոր ոսկորներ կան։

—2300 հատ չերամը հազիւ մէկ փաունտ մետաքս կրնան շինել։

—140 փաունտ կշռող մարդու մը մարմինը կրնայ այրուիլ 55 րոպէի մէջ, ու կ'արտադրէ միայն երեք փաունտի չափ մոխիր։

—Եւրոպա ջուրի մակերևոյթէն 670 ոտք բարձր է, Հիւսիսային Ամերիկա՝ 1150, Հարաւային Ամերիկա՝ 1100 ոտք։

—Սալմըն ձուկը տարին 10 միլիոն հաւկիթ կածէ։

—Լօնտոնի և Նիւ Եորքի ժողովրդեան՝ մէկ ամիսի մէջ քաշած չէքերու արժէքը 6 ու կէս երկիլիոն տոլար է, կամ աշխարհիս մէջ գտնուած բոլոր ոսկի և արծաթ դրամներու գնին կրկնապատիկին չափ։

—Մեծ բժիշկները կըսեն թէ դժուարամարսութեան աթոռը ոչ թէ ստամոքսին՝ այլ մարդուս գլխին մէջն է։

—Մէկ զոյգ նապաստակը չորս տարիի մէջ 1,250,000 անդամներէ բաղկացեալ ընտանիք մը կրնայ կազմել։

—Միջին հաշուով խաղութպանք կապրին 41 տարի. կառապանք՝ 43, վաճառականք 48, փաստաբանք՝ 52 իսկ երկրագործք՝ 64։

** ՈՍԿԵՓՈՐԻԿ **

** Նիկողայոս Յովսէփեան 20 արտավար այգի գընեց քաղաքիս մօտերը՝ 2500 տոլարի։

** Օր. Արմաւենի Տօմպալեան նշանուեցաւ Յովհաննէս Մակարեանի հետ։

** Յարեթ Նշիկեան Ալ փողոցի վրայ տուն մը գնեց 2000 տոլարի։

** Մանուկ Աճէմեան և Ս. Բատիկեան 80 էյքր հող գնեցին Ճէրմըն Սէյվինկս դրամատունէն։

** Մ. Շահպազեան իր՝ 360 էյքր երկրի մէջ ունեցած կէս բաժինը ծախեց իր ընկեր Փ. Մովսէսեանի։

** Կ. Պ. Ճօղէֆեան իր՝ քաղաքիս մէջ ունեցած տուներէն մէկը ծախեց ամերիկացիի մը։

**Ալէքսան Գրիգորեան ամուսնացաւ Օր. Աղաւնի Միքայէլեանին հետ՝ անցեալ ուրբաթ իրիկուն։

**Կարապետ Պէյքըն 160 էյքր այգի գնեց՝ քաղաքէս 15 մղոնի չափ դէպի արևելք, ու իր նախկին 20 արտավար այգին ծախեց Կարապետ Սարոյեանի։

Ամերիկական Կազմուած

Ա. ԸՍԹԱՔ

Համդերձավաճառ

Թանքսկիվինկի առթիւ՝ գները կէսի բաժնուած են։
1027 Ճէյ փողոց, — — — Ֆրէզնօ, Քալ.

ԳՆԱ ԱՌ

ՊԱՐՐԷԹ ՀԻՔՍ ԸՆԿ.

ՎԱՌԱՐԱՆՆԵՐՈՒ, ՊՈՂՊԱՏԵԱՅ ԲԱՆՁԵՐՈՒ, ՆԵՐԿԻ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԵՐԿԱԹԵՂԷՆ

1035-1041 ԱՅ ՓՈՂՈՑ — ԹԷԼԷՖՕՆ
ՖՐԷԶՆՕ, ՔԱԼ — Էքսչէնչ —Թիւ 2

ՅԱՏՈՒԿ ՎԱՃԱՌՈՒՄ

Մարդոց Համդերձեղէններու

ՄԷԿ ՇԱԲԱԹԻ ՀԱՄԱՐ ՄԻԱՅՆ

12 եւ 15 ՏՈԼԱՐՆՈՑՆԵՐԸ

10 Տոլարի միայն

Ասոնք շինուած են չէվիըթ, սէրճ, քլէյ ուօրսթըտ և քաշմիր կերպասներէ, ու կարուած են վերջի ձևերուն վրայ։ Գոյներու ամեն տեսակներ։

Մեր 6,50ի եւ 8,50ի

Օվըրքօթները գալ քննելու եա։ Աշխարհը չի կրնար մրցիլ երբէք անոնց դէմ։ Բոլոր մեր համդերձեղէնք ժամանակին նորութիւններն են։

The.... C.O.D. STORE
Louis Solomon 1737 Mariposa St.

ՕՔԹԱՎ ՏԱՐՃԷԼԻՍ

Գաղղիական Հացագործ.

ԿԸ ՎԱՃԱՌԷ ՆԱԵՒ ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏԻՐ ԳԻՆԻ
1318 Քէյ փողոց — — — Ֆրէզնօ, Քալ.

Տքթ. Յ. Հ. Բարսեղեան

ՖՐԷԶՆՕ ԼՕՆ ԷՆՏ ՍԷՅՎԻՆԿՍ ՊԱՆՔ ՊԻԼՏԻՆԿ
Սենեակ 16 17, Թէլէֆօն Պլու 492. Ֆրէզնօ Քալ.